

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 811.19 (82.050)

DOI: 10.52063/25792652-2024.3.22-154

ՎԱՐԴՈՒՅԻ ԲԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ,
ՀՊՏՀ ԳՄ անգլերենի դասախոս,
ք. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն
varduhi.baloyan@edu.isec.am
ORCID: 0000-0001-5018-4045

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել թարգմանական գրականության դերն ու ազդեցությունը, որոնք արտացոլվել են առաջին հայ մանկապատանեկան պարբերականների («Բուրաստան սբ. Սահակեան»՝ 1851–1853, Կ. Պոլիս, «Թուրակ Հայկազեան»՝ 1854–1855, «Երկասեր»՝ 1855, Չմյուռնիա) թարգմանական նյութերում:

Հիմնական խնդիրն է բացահայտել և վերլուծել պատանի ընթերցողների համար թարգմանված նյութի բովանդակությունը: Սույն ուսումնասիրությունը մինչև իրոհրդային շրջանի հայկական պարբերականներում թարգմանված մանկական գրականության վերաբերյալ մեր ծավալուն հետազոտությունների շարունակությունն է:

Այս հետազոտության մեջ օգտագործված մեթոդաբանությունը ներառում է ինչպես որակական, այնպես էլ քանակական վերլուծություններ և պատմական մոտեցում: Համեմատական վերլուծությամբ անդրադարձել ենք նաև թարգմանական նյութի վերատպումներին և առանձին թարգմանություններին, որոնք կարևոր տեղ ունեն ինքնուրույն մանկապատանեկան գրականության ձևավորման գործում:

Թարգմանված գրականությունը ձևավորել է հայ և եվրոպական հաղորդակցության գրական և սոցիալական միջավայրը և նպաստել համաշխարհային գրական ժառանգության տարածմանը և պահպանմանը: Ժամանակի հայ մտավորականները հավատում էին, որ ազգային կրթության և զարթոնքի համար հարկավոր է վերցնել եվրոպական լուսավորության լավագույն գաղափարները և դրանք տարածել հայ մանուկների և պատանիների շրջանում: Դա հնարավոր էր իրագործել համապատասխան գաղափարական գրականության թարգմանությունների միջոցով, որոնք տպագրվեցին նոր ձևավորվող աշակերտական պարբերականներում:

Հիմնաբառեր՝ լեզու, մտածողություն, թարգմանություն, մանկագրություն, միջմշակութային, հայերեն, պարբերականներ:

* Հոդվածը ներկայացվել է 06.07.2024թ., գրախոսվել՝ 05.08.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Ներածություն

Սույն հոդվածում պատմական մոտեցմամբ ներկայացնում ենք 19-րդ դարի 50-ականներին հրատարակված աշակերտական պարբերականների («Բուրաստան սբ. Սահակեան»՝ 1851–1853, Կ. Պոլիս, «Թուրակ Յայկազեան»՝ 1854–1855, «Երկասեր»՝ 1855, Չմյուռնիա) թարգմանական կյուրերը, որոնք առաջին քայլերն էին մանկապատանեկան գրականության ստեղծման և պարբերականների գաղափարական որոշակի ուղղվածությունը ձևավորելու ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանկական գրականությունն օգտագործվել է որպես արդյունավետ քարոզչամիջոց և լայնորեն տարածվել պարբերականների միջոցով: Խոսելով գաղափարական դաստիարակության և մշակութային հաղորդակցման գործում մանկապատանեկան մամուլի դերի մասին՝ գրականագետ Ս. Նազարյանը գրում է. «Հայ պարբերական մամուլի անբաժանելի մասն է կազմում մանկապատանեկան մամուլը, որի սկզբնավորման ու զարգացման պատմությունը շաղկապված է մեր ժողովրդի հասարակական, քաղաքական կյանքի պատմական զարգացման օրինաչափությունների հետ: Մանուկներին ու պատանիներին հասցեագրված մամուլը, ունենալով իր ներգործության ոլորտները, թափանցելով մատաղ սերնդի հոգևոր ու մտավոր աշխարհը, կարևոր ու անհրաժեշտ դեր է կատարում ապագա քաղաքացիների պատրաստման գործում» (Նազարյան 168):

Անկախ պատմական անհանգիստ և անկայուն ժամանակներից՝ բոլոր դարերում շարունակվել է հայկական գրականության առաջընթացը, թեև պետք է փաստել, որ անկախ պետության բացակայության պայմաններում քաղաքական և տնտեսական գործոններն իրենց ազդեցությունն են թողել աշխարհիկ գրականության վրա: Ինչպես ցանկացած ազդեցություն միանշանակ չէ, թարգմանությունների պարագայում օգտակարի հետ ավելացել են նաև վնասակար և անհարիր տարրեր: Նման խորթ դրսևորումներ տեսնում ենք առաջին պարբերականների թարգմանություններում: Որոշակի ժամանակ էր անհրաժեշտ, որպեսզի թարգմանական գրականության օտար տարրերը և կնիքը աննկատ դառնային:

Համեմատություն անելով «ռուսաբնակ հայերի» ստեղծած գրականության հետ, Մ. Մամուրեանն «Արեւելեան Մամուլում» գրում է. «Այս իրաւ է որ ռուսաբնակ հայերը կ'նկրտին ազգային նոր դպրութիւն մը ստեղծել: Եթէ այս օգտաւէտ ձգտման բնապատճառը փնտռենք՝ չպիտի գտնենք թարգմանութեանց շատութեան, լրագրաց առատութեան մէջ՝ այլ իրենց աւանդապահ բնաւորութեան, տոհմային բարուց և վարուց, դաստիարակութեան և Հայաստանի մօտաւորութեան մէջ: Ծանր լծի մը ներքև՝ մարդիկ ստեպ կրօնից, ազգային հնութեանց և աւերակաց մէջ ապաւեն փնտռելով՝ սփոփում և ներքին ազատութիւն մը կ'գտնեն.... Կովկասու հայն ալ, կ'իմանան բարեկիրթը, իր տաճարին, իր խաչին, իր եկեղեցոյն մէջ կ'որոնէ փրկութիւն մը....- կ'ներշնչի, համալսարաններ կ'յաճախէ, իր հարց գերեզմաններուն փոշին և ոսկորտիքը կ'խառնէ, անոնց տեսքովը կը վառի, իր հայրենակիցներուն կեանքովը կ'ապրի և ի վերջէ՝ իր մտաց արդիւնքը՝ եթէ երբեք՝ ի յոյս հանէ՝ ոչ այս ոչ այն ազգին գրականութեան ընդօրինակութիւնն կամ հետևութիւնն է, այլ լոկ իր հանճարին ծնունդը, իր ազգային եութեան մասը, վերջապէս նոյն ինքն է և չէ թէ օտարական մը» (Մամուրեան 36-37):

Մինչ «Բուրաստան ս. Սահակեանի» լույս ընծայումը՝ պարբերական մամուլի էջերում տպագրվել են պատանի ընթերցողին հարմար ինքնուրույն և թարգմանական մի շարք գործեր, ինչպես, օրինակ, անգլիացի մանկագիր Թոմաս Դեյի «Պատմություն մանկան միոյ» վիպակը, որը գրաբար թարգմանությամբ տպագրվել է «Ազդարարում» 1794 թվականին: Ինչպես գրում է գրականագետ Վարդան Փարթամյանը՝ «Ջեկի պատմության» թարգմանությամբ «Ազդարարն» «իր հոգևոր համերաշխությունն է հաստատում լուսավորիչների ազատախոհ գաղափարների հետ» (Փարթամյան 41):

Առաջին պարբերականները. մանուկները՝ մանուկներին

Հայ մանկական մամուլի սկզբնավորումը հաստատվել է «Բուրաստան սբ. Սահակեանի», «Թուրթակ Հայկազեանի» և «Երկասերի» տպագրության շնորհիվ: Պարբերականների երիտասարդ խմբագիրները միաժամանակ գիտակցում էին, որ պետք էր ընտրել այնպիսի նյութեր, որոնք չեն վնասի պատանի ընթերցողի մտահայացը, կհամապատասխեն հայ ժողովրդի շահերից բխող իրական պահանջներին և կնպաստեն ազգային զարթոնքին: Մասնագիտական լայն շրջանակներում որպես հայ մանկական առաջին պարբերական՝ համարվում է Հակոբ Պարոնյանի «Թատրոն բարեկամ մանկանցը», սակայն վերոնշյալ պարբերականները, ավելի վաղ հանդես գալով, լույս են տեսնում մանկական պարբերականների առաջացման ակունքների, գաղափարական հենքի և մշակութային փոխադրեցությունների ուսումնասիրությունների վրա: Ժամանակի հայ թարգմանական գրականությունը հիմնականում կրոնական բնույթ է ունեցել, և անցումը դեպի առանձին մանկական հետաքրքրաշարժ գրականություն դեռևս ժամանակ էր պահանջում:

Մ. Նուպարեանը «Արեւելեան Մամուլում» լույս տեսած «Իմ Մանկական Յիշատակներես» շարքում Մեսրոպեան վարժարանի մասին գրում է. «Ինչ ուսումնասեր եռանդ մ'եր այն որ կը տիրէր դպրոցէ դուրս և ներս: Մեսրոպեան վարժարանի աշակերտներէ երկու խումբ՝ տղայ հասակէ տպարան կը հաստատուին և թերթ կը խմբագրէին Անդրեասայ պաշտպան հովանիի տակ: Առաջին խումբը տարիէ մը հետէ իր յատուկ տպարանէ *Թուրթակ* կը հրատարակէր, երբ երկրորդ խումբը՝ որու մէջ *Մանկական Յիշատակներու* հեղինակն ալ կը գտնուէր, հրատարակէր Երկասերը, այն ևս իր առանձին տպարանին մէջ, իբր մրցողդ *Թուրթակի*... Այսպէս ուրեմն դպրոցական պատանիներյանկարծ մէջ մէկ խմբագիրներ դարձած օրագրի յօդուած կը գրէինք կամ կը թարգմանէինք...» (Նուպարեան 703-704): Նույն հոդվածից տեղեկանում ենք նաև, որ աշակերտական այլ պարբերականներ ևս լույս են տեսել, այդ թվում՝ «աւելի կամ նուազ արժանեօք Ծաղիկ, Միութիւն, Գարուն ..», Յաւերժահարս, Դիմակ հանդեսները»:

«Բուրաստան սուրբ Սահակեան» պարբերականն ունեցել է «Բարոյական», «Բանասիրական» և «Ուսումնական» բաժիններ: Ինչպէս գրում է Ս. Նազարյանը. «Դժվար էր «Բարոյական» բաժնի համար նյութեր հայթայթելը: Պատանիներին առանձին հասցեագրված ինքնուրույն գեղարվեստական գործեր գրեթէ չէին գրվում... Պատանի խմբագիր-հրատարակիչները ստիպված էին լինում դիմելու թարգմանական գրականությանը» (Նազարյան 170): Գեղարվեստական ընթերցանության համար ընտրում էին գրույց-հեքիաթները, առակները, ռամկական երգերը, «զանազան լեզուներէ թարգմանութիւններ, գրաբառ և աշխարհաբառ ճառեր և ոտանաւորներ, հետաքրքրական նիւթեր...», որոնք և արժանիքներ են ստեղծում երիտասարդների մոտ: Ըստ «Բուրաստանի» խմբագիրների՝ կրթությունը և ընթերցանությունը պետք է հասանելի լինէին նաև աղքատներին: Բարոյական բաժնում տեղ գտած «Կիրքը կանոնաւորելը ճշմարիտ իմաստութիւն է» հոդվածում գրում են. «Պէտք չէ հարց և մարց միայն մանչ զաւկաց ջանալ ուսմունք սովորեցնել, այլ առաւել աղքատաց, որ մեծամեծ արգասիքներ և բարիքներ կրնան յառաջ գալ. աղքատաց կրթութիւնն ալ գլխաւորապէս մարց կը վերաբերի. ուսմանց սկզբունքները և բուն իրենց մայրենի լեզուին ծանօթութիւնները պէտք է որ մարք հոգ տանին սովորեցնել...» («Բուրաստան» հ. 6, 90): Վարժարանի տեսուչ Անդրեաս Փափագեանը կարևորել է հայերեն եւ ապա օտար լեզուների ուսուցումը, հետեւաբար, միանգամայն բնական էր, որ աշակերտները թարգմանություններ էին կատարում տարբեր բնագրերից, այդ թվում՝ անգլերեն եւ ֆրանսերեն:

Խմբագիրները կարևորում էին նյութերի ներկայացումը ըստ տարիքների, և պատանի ընթերցողներին առաջարկում էին արկածային և ճանապարհորդական

գործեր, երևելի անձանց մասին կենսագրականներ, որով և մշակութային հաղորդակցման հնարավորություն էին տալիս: Նման օրինակներ են ճանապարհորդական ակնարկները: «Ռուս ճանապարհորդի մը Ամերիկայի մեջ պատահած արկածները»՝ Սարգիս Վահագն Գ. Շամլեանցի թարգմանությամբ, ներկայացնում էր հետաքրքիր և նոր աշխարհ, որը մինչ այդ անհայտ էր հայ մանուկ ընթերցողին, շարժում էր նրա երևակայությունը և հետաքրքրասիրությունը («Բուրաստան», հ. 3, 42-44):

Ճանապարհորդական պատմության այլ նմուշ է «Անգլիական Յնդկաստան» խորագրի ներքո հրատարակած թարգմանությունը՝ «Գերմանացի իշխանի մը ճամբորդութիւնը, Լուքսոյի մէջ Ուդիի թագաւորէն գտած ընդունելութիւնը, և Ակռա քաղաքը ըրած այցելութիւնը» վերնագրով՝ դարձյալ Գ. Շամլեանցի թարգմանությամբ («Բուրաստան», հ. 7, 116): Ճանապարհորդ Ուալտմ իշխանն արքայազն Վալդեմարն է՝ Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ 4-րդի եղբորորդին: Պատմությունն ընդգրկում է Յնդկաստանի գաղութացման ժամանակաշրջանը: Ճամբորդության միջոցով ընթերցողին տեղափոխում է Յնդկաստանի քաղաքներ, պալատներ և հրապարակներ, ծանոթացնում որոշ սովորույթների, այդ թվում՝ հրապարակներում գոմեշների և վագրերի մենամարտի: Ներկայացնում է Ամժուտ թագավորի և անգլիական դեսպանների հարաբերությունները: Մեզ հաջողվեց պարզել, որ պատմությունը Պրուսիայի Վալդեմար արքայազնի մասին է, որը 1844 թվականին ճամբորդել է Յնդկաստան և այլ երկրներ և պահել ճամբորդական օրագիր: Նրա հիշողությունները տպագրվել են երկու հատորով 1853 թվականին: Գերմաներեն վերնագիրն է «*Zur Erinnerung an die Reise des Prinzen Waldemar von Preußen nach Indien 1844-1846*» «Ի հիշատակ 1844-1846 թվականներին Պրուսիայի իշխան Վալդեմարի Յնդկաստան կատարած ճամբորդության»: Հաշվի առնելով գրքի տպագրության ժամանակը և այն հանգամանքը, որ ճանապարհորդությունների մասին գրվել են ժամանակի տարբեր պարբերականներում, ենթադրում ենք, որ աշակերտներն օգտվել են հայտնի պարբերականներից: Այս պատմությունը արդիական է նաև այսօր, քանի որ այքայազնը նաև նկարել է իր այցելած վայրերը, և մինչ օրս նրա նկարները ցուցադրվում են Յնդկաստանում և այլուր: **Բարոյական** բաժնում ներկայացված հետաքրքրական գործերից է «Բոբինճայ իշխանին երջանկութիւնն բնտռելու ճամբորդութիւնը» թարգմանական պատմվածքը («Բուրաստան», հ. 1, 13-16): Անգլերեն բնագիրն է «*Travels of Prince Polinjay*»: Այս պատմվածքի բնօրինակը տպագրվել է Նյու Յորքում 1851 թվականին, այն պատմում է Ասիայի թագավորներից մեկի որդու՝ երջանկության որոնումների ճամբորդության մասին: Ենթադրաբար թարգմանվել է անգլերեն բնագրից, որպես թարգմանիչ նշված է՝ Նազարեթ Արմենակ Կարապետեան: Պատմությունը հարուստ պատանի իշխանի մասին է, որը ծանձրանում է իր հոր պալատում և գնում է երջանկություն որոնելու: Երբ աներևույթ մանուկը հարցնում է իշխանի սրտի ուզածը, պատասխանում է. «Երջանկութիւնը ցըցուր ինձի... և սորվեցուր ինձի նաև թե ինչպես կըրնամ ձեռք բերել զանի»: Այս թարգմանական գործը ևս ճանապարհորդության միջոցով նոր ճանաչողությունների մասին է:

Հետաքրքրության է արժանի «Պարոն Բուբնամ և գայլ» թարգմանական պատմվածքը («Բուրաստան», հ. 6, 94-95): Այն պատմում է ամերիկյան հեղափոխության հայտնի գեներալ Իսրայել Պորթման կամ Պուլման (1718-1790) անունով մարդու մասին, որը հմուտ զինվորական է եղել Մասաչուսեթսից: Ըստ ավանդության՝ 1739 թվականին վնասագերծել է ԱՄՆ քաղաքներից մեկի վրա հարձակված գայլին: Պատմվածքը շեշտադրում է քաջությունը և հայրենիքին ծառայելու կարևորությունը: Աղբյուրի մասին տեղեկություն չի նշվում: Հնարավոր է, որ «Բուրաստանի» ուսանողները թարգմանել և փոխադրել են Դեվիդ Հեֆրիզի 1788 թվականին լույս տեսած «*Putnam and the Wolf*» պատմվածքը, որի ամբողջական տարբերակն է «*The Life and Heroic Exploits of Israel Putnam*» վիպակը: Այս գործն

այժմ համարվում է մոռացված գրքերից և, թերևս, հայկական թարգմանությունների անդրադարձը հնարավորություն է տալիս հանելու մոռացությունից և ներկայացնելու նոր ժամանակներում:

Պարբերականներում հաճախ են տպագրվել թարգմանական առակներ: Եզոպոսի առակներից թարգմանաբար տպագրվել են «Կապիկ եւ աղուէս», «Մուկ և ոստրէ կամ Անխոհեմութեան և անհնազանդութեան պատիժը», «Աղուէս և որսորդ կամ Չարակամութեան պատիժը» և այլն: Ինչպես տեսնում ենք, վերնագրերի թարգմանություններն արտացոլում են նաև առակի բարոյախրատական պատգամը: Առակների թարգմանության լեզվի մասին տեղեկություն չի ներկայացվել:

«Բուրաստան սուրբ Սահակեանում» ենք հանդիպում նաև պատմականագրական ակնարկների առաջին նմուշներին: Թարգմանաբար ներկայացվում է Թովմաս Ինկլիխտի կենսագրությունը՝ «Կենցաղագրութիւն» խորագրով. նշենք, որ հետագայում երևելի մարդկանց մասին պատմականագրական ակնարկներ տպագրվել են նաև «Թութակ Յայկազեանում», օրինակ, «Աշխարհիս մեջ եկած երեւելի մարդկան երիտասարդութեան ժամանակը» գրույցը, որը հունարենից թարգմանել է Վ. Յար. Սիմոնեարեանը:

Կարծես անգլիական պատմությունները օրինաչափ են եղել «Բուրաստանի» համար, հետևաբար, հիշատակենք ևս երկու թարգմանական գործ՝ **Բանասիրական** բաժնում տպագրված «Թօֆան անուևով զօրեղ մարդու մը պատմութիւնը»՝ Միքայել Սիսակ. Մ. Նաւավարեանի թարգմանությամբ և **Երախտագիտութիւն** բաժնում տպագրած՝ «Ագայ ու ծիաւորին և Սօնթառկենին շանը պատերազմը»՝ Յարութիւն Արամ Մ. Այտընեանի թարգմանությամբ: Թօֆան-ի պատմության հիմքում հսկա Թովմաս Թոֆամի մասին պատմությունն է (Thomas Topham, c. 1710 – 10 August 1749), որը ցուցադրել է իր ուժը Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում: Պատմությունը վերցված է Ուիլյամ Յոուլիթի «Լոնդոնի հյուսիսային բարձունքները...» աշխատությունից ("The northern heights of London; or, Historical associations of Hampstead, Highgate, Muswell Hill, Hornsey, and Islington", William Howitt, London, 1869, 538-542): Նույն տարում գործը տպագրվել է նաև Colonist (1857-1920) պարբերականում: Հաշվի առնելով սույն գործի թվականը՝ ենթադրում ենք, որ ավելի վաղ հրատարակություններ ևս եղել են, որոնցից օգտվել են «Բուրաստանի» թարգմանիչները: Ամենայն հավանականությամբ, նպատակ են ունեցել ընթերցողների հետաքրքրությունը գրավելու նաև օտար երկրների տարօրինակ մարդկանց պատմություններով:

«Ագայ ու ծիաւորին և Սօնթառկենին շանը պատերազմը» Յարութիւն Արամ Մ. Այտընեանի թարգմանությամբ հիմնված է Մոնթարգիսի Լեգենդի վրա ("Legend of Montargis"), որի համաձայն 14-րդ դարում Կառլոս 5-րդի պալատականներից մեկի սպանության միակ վկան շունն է լինում, ով վրեժ է լուծում տիրոջ համար: "Le Chien de Montargis" կամ "The Dog of Montarges" պատմությունը գրվել է Ռոբերտ Մքկեր գրական կերպարի մասին հյուսված պատմության հիմքով:

«Բուրաստանի» հետաքրքրաշարժ կյուբերից հիշատակության արժանի է նաև **Չուարճավէպ** բաժնում տպագրված «Փնչինելլօ Խեղկատակին խաղերը» պատմվածքը, որը շարունակաբար լույս է տեսել «Բուրաստանի» 1851 թվականի 3-ից 12-րդ թողարկումներում: Թարգմանել է Միքայել Սիսաք Մ. Նաւավարեանը: Պունչինելլան, որը հայերեն տարբերակում տառադարձվել է Փրնչինելլօ, իտալական մշակույթում հայտնի տիկնիկն է կամ խեղկատակը, ով ներկայացումներով զույմար էր վաստակում ծիծաղեցնելով մարդկանց: Ըստ ավանդության՝ Պունչինելլան խորհրդանշել է Նեապոլյան հասարակ մարդկանց, որոնք իրենց խնդիրներին վերաբերում էին ժպիտով: Պունչինելլայի մասին զանազան պատմություններ են տպագրվել ժամանակի հայտնի տարբեր պարբերականներում: Մենք դիտարկել ենք մի շարք հասանելի տարբերակներ, այդ թվում՝ անգլերենով գրված "The Life and adventures of Punchinello" վիպակը: Այն տպագրվել է 1856 թվականին Նյու Յորքում:

Անգլերեն տարբերակը թարգմանված է ֆրանսերեն բնօրինակից, որը գրված է Օկտավ ֆոյեի (1821-1890) կողմից: Բնօրինակն է *“La Vie de Polichinelle et ses nombreuses aventures”*. Հավանաբար ժամանակին եղել է նաև կրճատ տարբերակ, որից էլ թարգմանել են Սուրբ Սահակեան վարժարանի աշակերտները:

«Թուլթակ Հայկազեանը» համարվում է օրագիր բարոյական, բանասիրական և ուսումնական: Գործել է 1854 թվականից Մեսրոպ Նուպարեան վարժարանի սաների և Տեր Վրթանեսի ջանքերով: «Թուլթակ Հայկազեան»-ից միայն 3 և 5 համարներն են հասանելի ուսումնասիրության համար: Թարգմանական գործերից շատերը նույնությամբ կամ մշակումներով արտատպվել են այլ մանկական պարբերականներում, ինչպես օրինակ «Ռուս ճամփորդի մը Ամերիկայի մեջ գլխուն եկածները» Պարոնյանի «Թատրոն. բարեկամ մանկանցում»: Մեզ հասած համարներից մեկում 1855 թվականին տպագրվել է «Նշանախօս Վարժապետը» պատմվածքը (անգլերենից թարգմանված Ա. Գալուստի և Գ. Կոստանդեանի կողմից), որտեղ ընթերցողը ծանոթանում է Լոնդոնյան կրթական միջավայրին և հարաբերություններին. «Լոնտրայի մեջ հռչակաւոր օտարազգի լեզուագետ մը կար, եւ իրեն գիտցած լեզուներովը խօսիլ կ'ուզէր Անգղիացւոց երեւելի վարժապետներուն հետ. ուստի իր միտքը առաջարկեց Օքսֆորդի մեծ վարժապետին.....» («Թուլթակ» հ. 3, 38-40): Պարոնյանի «Նշանացի խօսակցութիւն» պատմվածքը հիմնված է նույն ստեղծագործության վրա: «Թուլթակում» ևս պատմությունները տարբեր երկրների մասին են, ինչպես, օրինակ, «Հնդկաստանի իշխանի մը ապերախտութիւնը» անստորագիր գրույցը և «Ակամայ աստղաբաշխ» հեքիաթը: Այստեղ նաև կան այլ թարգմանական գործեր, օրինակ՝ ֆրանսերենից թարգմանած չափածո ստեղծագործությունը՝ «Բնական ապացոյց գոյութեան Աստծոյ», որը Ռասինի «Երգ վասն կրօնից» գրքի հայերեն թարգմանությունից է՝ հրատարակված Վիեննայում 1842 թվականին Մ. Գարագաշյանի կողմից: Ինչպես տեսնում ենք, խմբագիրները ծանոթ են եղել արևմտաեվրոպական ստեղծագործություններին:

1855-ին Չմյուռնիայում լույս է տեսել «Երկասեր» աշակերտական պարբերականը, որի միայն թիվ 7-ն է հասանելի թվայնացված մամուլի էջերում: Բանասիրական, ուսումնական և շուրջապատկեր բաժիններում տպագրել են մանկական երկեր, հանելուկներ, հեքիաթներ և այլ ստեղծագործություններ: «Երկասերի» հասանելի համարում տեղ է գտել «Գորտը թագաւոր կը խնդրեն» առակը՝ գրաբար թարգմանությամբ: Այն Եգոպոսին վերագրվող քաղաքական ամենահայտնի առակներից էր և մեկը այն 39 առակներից, որոնց բնութագրող արձանները Շարլ Պերրոյի խորհրդով ցուցադրված էին Վերսալի «Արքայի այգու» լաբիրինթոսում: Ամենայն հավանականությամբ, աշակերտները մշակել են առակի տարբերակներից մեկը և հայ ընթերցողին առավել հասանելի դարձնելու համար առակի տարբերակներում ամենահաճախ հանդիպող Յուպիտերին փոխարինել Արամազդի անունով՝ «.....գորտը համայն առ Արամազդ բառնան գծայն.....» («Երկասեր», 1855, հ. 7, 115): Առակն անտեղի դժգոհություններով Աստծուն զայրացնելու, ունեցածը չգնահատելու խորհուրդն է շեշտում: Առակի այլ թարգմանություն տպագրվել է նաև «Բազմավեպում»՝ «Գորտը խնդրեն յԱրամազդայ ինքեանց թագաւոր» վերնագրով («Բազմավեպ», 1865, թ. 6, 187-188):

«Երկասերում» լույս տեսած այլ գործերից է «Շատակեր գիւտուրը»: Այս պատմվածքը հավանաբար 18-րդ դարավերջին ապրած ֆրանսիացի որկրամոլ Տարարեի մասին է, որը կերել է հնարավոր ու անհնար ամեն ինչ, բայց չի հազեցել: Նա կյանքի որոշ տարիներ եղել է գիւնվորական և «Երկասերի» պատումը համընկնում է Տարարեի կենսագրական հոդվածների որոշ դրվագներին, թեև աղբյուրի կամ բնագրի լեզվի մասին որևէ տեղեկություն չի փոխանցվում: Շատակերի մասին պատմող տարբեր պատառիկներ տպագրվել են ժամանակի բազմաթիվ պարբերականներում անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով: Օրինակ, հանդիպել ենք ավստրալական մի թերթում 1832 թվականին տպագրված հոդվածի, որտեղ հիշատակում է անգլիական

քնազիր տեքստ “Amusing, English Extracts” բաժնում “Spiritual glutton” [Յոգեւոր որկրամոլ] վերնագրով: Մյուս պատմվածքը «Ծերու մը խօսքեր» վերնագրով գործն է (թարգ. Ի Գաղղ. Ե. Յ. Չայեան): Բովանդակությամբ առնչվում է Նախախնամությանն ու Աստծուց գոհունակ լինելու խնդիրներին: «Հպարտութենէ յառաջ եկած թշուառութիւնը» հնազանդությունն քաջալերող կյուր է, որտեղ քննադատում է հպարտությունը Բավարիայի իշխան Սամուէլի կյանքի օրինակով: Սկզբնաղբյուրի և թարգմանության մասին տեղեկությունները բացակայում են: **Ուսումնական** բաժնում ներկայացված են տարբեր պատմություններ, որոնցից հետաքրքրական են «Շամիրամայ ծննդեանը վրայ համառօտ տեղեկութիւն» և անտիկ աշխարհի նկարիչ Ապելլեսի մասին թարգմանած գրույցները՝ «Ապելես»:

Ինչպես բնորոշ է եղել ժամանակի եվրոպական պարբերականներին, «Երկասերը» ևս ունեցել է «Չուարճալիք» կոչվող բաժին, որտեղ թարգմանաբար տպագրվել են հետևյալ գրույցները՝ «Խելացի ծառայ», «Ճանճ», «Յարմար պատասխանի», «Ճարտար պատասխանի»: Այս բոլոր գրույցները մինչ օրս պատմվում են և հայտնի են բազմաթիվ լեզուներով: Ինչպես նախորդ պարբերականներում ենք տեսնում, աշակերտները տարբեր տարօրինակ մարդկանց պատմությունների թարգմանությամբ փորձել են հետաքրքրել ընթերցողներին: Թեև այս գործերը մանկապատանեկան գրականության դասական նմուշներ չեն, սակայն պատանի ընթերցողի ժամանցի, աշխարհայացքի ընդլայնման և գաղափարական դաստիարակությանն են ուղղված: Այդ ամենով հանդերձ, կարևոր դեր են կատարել նաև աշխարհիկ թարգմանական գրականության զարգացման գործում:

Եզրակացություն

Այսպիսով՝ առաջին աշակերտական պարբերականների թարգմանական գործերը հիմնականում դպրոցական ընթերցանության համար նախատեսված կյուրեր էին, որոնք հիմք ստեղծեցին մանկապատանեկան գրականության զարգացման համար:

«Բուրաստան սուրբ Սահակեանը», «Երկասերը» և «Թութակ Հայկազեանը» հող նախապատրաստեցին հետագայում նոր գրականության և առավել հասցեական մասնագիտական ուղղություններով պարբերականների առաջացման և զարգացման համար:

Թեև պարբերականները լույս էին տեսնում որոշակի դժվարություններով և կարճ կյանք ունեցան, սակայն շնորհիվ աշակերտների լեզվական գիտելիքների և թարգմանական գործունեության, համաշխարհային գրականության բազմաթիվ գործեր ինչպես առանձին հրատարակություններից, այնպես էլ համաշխարհային մամուլի էջերից, ենթարկվեցին լեզվամշակության փոխակերպումների և փոխադրվեցին հայախոս միջավայր: Դա հնարավորություն տվեց հայախոս ընթերցողին հաղորդակից դառնալու համաշխարհային գրական և կրթական միտումներին և գաղափարական շարժումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բազմավեպ». թիվ 6, 1865թ., Վենետիկ:
2. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 1, 1851թ., Կոստանդնուպոլիս:
3. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 6, 1851թ., Կոստանդնուպոլիս:
4. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 7., 1851թ., Կոստանդնուպոլիս:
5. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 3, 1852թ., Կոստանդնուպոլիս:
6. «Երկասեր». թիվ 7, 1855թ., Չմյունխա:

7. «Թուրակ Հայկազեան» պարբերական. Բ, թիվ 3, 1855թ., Չմյուռնիա:
8. Խառնադան, Ալբերտ. *Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր*, Զ. 1: Գահիրե, ՀՀ ԳԱԱ, 2006:
9. Մամուրեան, Մատթեոս. «Ցառաջաբան». Արեւելեան Մամուլ, հ. 1, Հունվար 1871թ., էջ 36-37:
10. Նազարյան, Սիլվա. *Հայ մանկապատանեկան մամուլը (1851-1917)*., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979:
11. Նուպարեան, Մեսրոպ. *Իմ մանկական յիշատակներես. Արեւելեան Մամուլ*, հ. 22, Դեկտեմբեր 1894թ., էջ 703-704:
12. Փարթամյան, Վարդան. *Հայ-անգլիական գրական առնչությունները*. ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1975, էջ 335:

WORKS CITED

1. Bazmavep [Polugistory]. 1865, V. 6, Venice. (in Armenian)
2. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851. v. 1. Constantinople. (In Armenian)
3. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851, v. 6. Constantinople. (In Armenian)
4. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851. v. 7. Constantinople. (In Armenian)
5. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1852. v. 3. Constantinople. (In Armenian)
6. Erkaser [Laborious]. 1855, V. 7. Smyrna. (in Armenian)
7. Kharatyan, Albert. *Hay parberakan mamuli patmut'yun XVIII-XIX darer [History of Armenian Periodical Press between XVIII-XIX centuries]*. V. 1. Cairo. 2006. (In Armenian)
8. Mamourear, Mesrop. *Harajaban [Preface]*. Arevelean Mamoul. 1871, p. 36-37
9. Nazaryan, Silva. *Hay mankatatanekan mamuly' (1851-1917). [Armenian Children's Press]*. Yerevan. NAS of ASSR. 1979. p. 219. (In Armenian)
10. Nouparean, Mesrop. *Im mankakan jishatakneres [From my Childhood Memrories]*. Areueyan Mamowl. V. 22, December 1894.
11. Partamian, Vardan. *Hay-angliakan grakan ar'nchut'yunnery' [Armenian-English Literary Relations]*. Yerevan. NAS ASSR. 1975. 335. (In Armenian)
12. Toutak Haykazean. [Toutak Haykazean] 1855. Zmyrna. V. 3. (In Armenian)

TRANSLATED CHILDREN'S LITERATURE IN THE FIRST ARMENIAN CHILDREN'S PERIODICALS

VARDUHI BALOYAN

*Institute of Literature after M. Abeghyan, Ph.D. Student;
Armenian State University of Economics, Gyumri Branch, Lecturer,
Gyumri, the Republic of Armenia*

This article aims to examine the role and impact of translated literature as reflected in the first Armenian children's and youth periodicals ('St. Burastan. Sahakyan,' 1851-1853, Constantinople; 'Tutak Haykazian,' 1854-1855; 'Erkaser,' 1855, Smyrna).

The primary objective is to identify and analyze the content of materials translated for teenage readers. This study serves as an extension of our comprehensive research on children's literature translated in Armenian publications during the pre-Soviet era.

The methodology employed in this study incorporates both qualitative and quantitative analyses, along with a historical approach. As part of the comparative

analysis, reprints and individual translations of literary works were also examined, as they play a crucial role in shaping independent children's and young adult literature.

Translated literature significantly influenced the literary and social landscape of Armenian-European interactions, aiding in the dissemination and preservation of global literary heritage. The Armenian intelligentsia of the time believed that national education and awakening required the adoption and spread of the finest European Enlightenment ideals among Armenian children and adolescents. This goal was pursued through the translation of ideologically relevant literature, which was published in the newly emerging periodicals aimed at students.

Key words: *Language, mindset, translation, children's literature, cross-cultural, Armenian, periodicals.*

ПЕРЕВОДНАЯ ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА В ПЕРВЫХ АРМЯНСКИХ ШКОЛЬНЫХ ЖУРНАЛАХ

ВАРДУИ БАЛОЯН

*соискатель Института литературы им. М. Абега,на,
преподаватель Гюмрийского филиала Армянского государственного
экономического университета,
г. Гюмри, Республика Армения*

Переводные работы, опубликованные в первых периодических изданиях для учащихся, прежде всего, служили образовательным целям и заложили основу для развития детской и юношеской литературы.

Цель статьи - изучить роль и влияние переводной литературы, опубликованной в первых армянских детских и юношеских периодических изданиях («Бурастан Св. Саакан», 1851-1853 гг., Константинополь, «Тутак Айказан», 1854-1855 гг., «Еркасер» («Трудолюбивый»), 1855, Смирна).

Основная задача исследования – выявить и проанализировать содержание переводных произведений для юных читателей. Настоящее исследование является продолжением нашего обширного исследования переводной детской литературы в армянской периодической печати досоветского периода.

Методология, использованная при данном исследовании, включает качественный и количественный анализ, а также исторический подход. При сравнительном анализе мы коснулись также репринтов переводного материала и отдельных переводов, занимающих важное место в формировании самостоятельной детской литературы.

Переводная литература сформировала литературную и социальную среду армянского и европейского взаимодействия и способствовала распространению и сохранению мирового литературного наследия. Армянские мыслители того времени считали, что для национального воспитания и национального пробуждения необходимо заимствовать лучшие идеи европейского просвещения и распространять их среди армянских детей и молодежи.

Это стало возможным благодаря переводам соответствующей идеологической литературы, которая публиковалась в создающихся периодических изданиях для учащихся.

Ключевые слова: *язык, мышление, перевод, детская литература, межкультурный, армянский, пресса.*